ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց Արմավիրի մարզի Ալաշկերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Ուսուցիչների համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցում

Վերապատրաստող՝ Արմինե Անտոնյան

Ուսուցիչ՝ Գյուլե Սարգսյան

Արմավիր 2023թ.

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Գլուխ 1 Ուսուցիչ – ծնող համագործակցության դերն ու առանձնահատկությունը աշակերտի դաստիարակության գործում-------- 6

1.1. Ուսուցիչ – ծնող համագործակցության իրականացման եղանակները սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության գործում---------- 9

Գլուխ 2 Հետազոտական մաս---------- 15

Եզրակացություն---------- 15

Գրականության ցանկ---------- 17

Ներածություն

Մ. Երմոլովայի հետազոտությունները փաստում են, որ երբ ծնողներն ակտիվ մասնակցում են ուսուցման գործընթացին երեխան ցուցաբերում է ավելի բարձր առաջադիմություն, դրական վարք, հարգալից վերաբերմունք դասընկերների, դպրոցի և ուսուցիչների հանդեպ, ունենում է հավատ սեփական անձի և հնարավորությունների նկատմամբ, ինչն էլ խթանում է նրանց ակտիվությանն ու մասնակցությանը ուսուցման գործընթացում: Փորձը ցույց է տալիս, որ ծնողների և ուսուցիչների շփման և արդյունավետ համագործակցության արդյունքում նակատվում են սովորողի կայուն և շարունակական ձեռքբերումներ, նրանց մոտ ավելի արագ են ձևավորվում և զարգանում սոցիալական հմտությունները, վարքը դրականորեն է վերափոխվում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Ինչպես նշում է հայտնի մանկավարժ Ջ. Դիլոնը <<Երեխաները դպրոցը պետք է պատկերացնեն մի վայր, որտեղ նրանց ջանքերը հանգում են հաջողությունների և այդ հաջողությունները մեծանում են, երբ ծնողները և ուսուցիչները գտնվում են սերտ համագործակցության մեջ և պատրաստ են օգնել երեխային անհրաժեշտության դեպքում>>:

Երեխայի դաստիարակության, անձի ձևավորման գործում իր առաջնային, անգնահատելի և առանձնահատուկ դերն ունի ընտանքիը: Սակայն ընտանեկան դաստիարակության առաջնահերթությունն ու կարևորությունը չի նսեմացնում դպրոցի և հասարակության դերը երեխայի դաստիարակության գործում: Ուստի պետք է կարևորենք այն օղակների համագործակցությունը, որն, անշուշտ, սկսվում է ընտանիքից:

Ընտանիքները տարբերվում են միմյանցից իրենց կառուծվածքով, խնդիրներով, արժեքներով, կրթության նկատմամբ իրենց վերաբերմունքով: Ուստի անհրաժեշտ է ընտանիք դպրոց փոխհարաբերությունն այնպես կառուցել, որ հաշվի առնվի առաջին հերթին յուրաքանչյուր երեխայի հնարավորությունները, առանձնահատկությունները, նաև ընտանքի պատվերը: Երեխայի դաստիարակությունը կախված է նաև ծնողների տեղեկացվածության մակարդակից,

ուստի ուսուցիչը պետք է սերտ համագործակցի նաև ծնողների հետ նրանց իրազեկելու նպատակով[5]:

Վարքով և հատկապես կարգապահությամբ է պայմանավորված՝ մարդու սոցիումում տեղն ու դերը գտնելու, վերջիններս արդյունավետորեն արժևորելու փաստը: Մարդը ձևավորվում է տակավին չծնված, սակայն այդ հարցում անփոխարինելի է կրթօջախների դերը: Ուստի աշակերտների մասին խոսելիս առաջադիմությունից զատ, անհրաժեշտաբար կանրադառնանք՝ ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ ինչպես նաև կանրադառնանք ուսուցչի համագործակցությունը սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում: Ուստի ունենալով մեկ ընդհանուր նպատակ՝ կրթել, դաստիարակել, զարգացնել երեխային բխում է հենց ուսուցչի համագրոծակցությունից ծնողների, կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության իրագործումից: Ուստի որպես արդիական թեմա կիրականցվի հետազոտություն ուսուցիչների համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցում:

Հետազոտությունը նպատակ ունի բացահայտելու ուսուցիչ – ծնող համագործակցության արդյունավետությունը կրթության որոկի բարձրացման վրա:

Հետազոտության հարցերն են՝

- Պարզել ուսուցիչ – ծնող համագործակցության ազդեցությունը սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության հարցում
- Պարզել ներգրավվածության ազդեցությունը ուսուցիչ – ծնող փոխհարաբերություններում, սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության հարցում
- Կարևորել երեխայի դաստիարակության գործընթացը թե ընտանիքում, թե դպրոցում
- Առաջադրել դաստիարակության գործընթացի բարելավման, ընտանիքի և դպրոցի համագործակցության արդյունավետ ուղիներ

Հետազոտության վարկած՝

Եթե ուսուցիչները և ծնողները կազմակերպված ձևով համագործակցեն, ապա սովորողների կրթության կազմակերպումը և դաստիարակությունը կլինի ավելի արդյունավետ։

Գլուխ 1 *Ուսուցիչ – ծնող համագործակցության դերն ու առանձնահատկությունը աշակերտի դաստիարակության գործում*

Ուսուցման առաջին տարին կյանքի դժվարին շրջան է ոչ միայն աշակերտների, այլ նաև նրանց ընտանիքների և ծնողների համար: Իզուր չեն ասում որ ծնողները սովորում են երկու անգամ. Նախ՝ իրենք իրենց համար, ապա հետագայում նաև իրենց երեխաների հետ միասին:

Ուսուցչի համագործակցությունը ծնողի հետ արդյոք անհրաժեշտ է , ուսուցիչների մեծամասնությունն այս հարցը կգնահատի որպես հռետորական բնույթի հարցադրում: Խնդիրն այն է, որ բոլոր ուսուցիչներին էլ հայտնի է ծնողների դերը և նշանակությունը երեխայի դաստիարակության գործում: Ընտանիքը դաստիարակչական խնդիրները լուծում է առանձնահատուկ մեթոդներով և հատուկ պայմաններում: Դրանք չեն կարող ստեղծվել նույնիսկ ամենակատարյալ հասարակական հիմնարկությունում:

Ուսուցչի և ծնողի համագործակցությունը մեծ դեր է խաղում աշակերտի կյանքում: Ուսուցանելու գործընթացի ապահովման պարտականությունը պետք է ստանձնի դպրոցը, իսկ դաստիարակելու խնդիրները հարկավոր է լուծել միասին: Շատ կարևոր է ծնողների ներգրավվածությունը աշակերտի կրթական գործընթացում: Ծնողները կարող են հաղորդել այնպիսի տվյալներ, որոնք ուսուցչի համար դժվար կլինի ինքնուրույն, դասարանական միջավայրում կամ այլ ճանապարհով ձեռք բերել: Ծնող-ուսուցիչ համագործակցությունը կնպաստի աշակերտի զարգացման, ուսուցման կազմակերպման, համապատասխան միջավայրի ստեղծման, կրթական կարիքների բավարարման արդյունավետ ուղիների որոնմանը:

Դպրոցի մանկավարժների, մյուս աշխատողների և ծնողների մշտական շփումներն ու լավ հարաբերությունները խթանում են սովորողի կրթական առաջընթացը: Ընտանիքը մնայուն է սովորողի կյանքում, մինչդեռ դպրոցը և ծրագրերը

փոփոխական: հենվելով ընտանիքի ուժեղ կողմերի և յուրահատկությունների ճանաչման և ընդունման վրա անհրաժեշտ է խթանել ծնող- դպրոց, ծնող-ուսուցիչ, ծնող- մասնագետ համագործակցությունը:

Այդ նպատակով իրականացվում են՝

- Համակարգված և պարբերական սեմինարներ և վերապատրաստումներ՝ ուղղված հատուկ կրթության չափորշչի պահանջների լուսաբանմանը
- Դպրոցի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում (ուսումնական չափորոշչի, ծրագրերի գրքույկներ, ուղեցույցներ ծնողների համար, տեղեկատու նյութեր, օրագրեր)
- Դասալսումներ ծնողների կողմից
- Ծնողական ժողովներ՝ տարեկան առնվազն չորս անգամ
- Դպրոցի բաց դռների օր, համատեղ տոնակատարություններ, միջոցառումներ:

Ծնողները պետք է հնարավորություն ունենան մասնակցել դպրոցի կառավարմանը և պատասխանատվություն կրեն իրենց պարտականությունների կատարման հարցում: Դրա լավագույն ձևը դպրոցական խորհուրդների ստեղծումն է:

Ընտանիքները պետք է ներգրավվեն իրենց երեխայի կրթությանը վերաբերող կարևոր հարցերի քնարկմանն ու որոշումների կայացմանը, քանի որ ծնողներն ուզում են վստահ լինել, որ դպրոցը իրենց երեխային լիարժեք և համապատասխան ձևով է նախապատրաստում ապագա կյանքին: Այս խնդիրը հանդիսանում է կարևորագույներից մեկը՝ կրթության որակը բարելավելու գործում:

Ընտանիքը, ի տարբերություն այլ սոցիալական հաստատությունների, ամենօրյա ազդեցություն ունի երեխայի վրա, հետևաբար, ունի գրեթե անսահմանափակ հնարավորություններ նրա անձնական որակները ձևավորելու հարցում:Սակայն «ծնող-ուսուցիչ» համագործակցության ստեղծումն ունի իր դժվարությունները[1] : Հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները սրում են ընտանիքում տիրող իրավիճակը՝ (բազմաթիվ ընտանիքների քայքայումներ, ընտանիքի հոգևոր հիմքերի թուլացում, սերունդների միջև տարբերությունների ավելացում)և բացասաբար են անդրադառնում մանկավարժական հարաբերությունների բնույթի

վրա։Սակայն, մյուս կողմից, նոր տիպի անհատականության դաստիարակությունը, ինքնակրթության և սոցիալականացման գործընթացների աճող կարևորությունը, ուսումնական գործընթացի անհատականացումն ու տարբերակումը և այլ երևույթներ կարելի է համարել դրական փոփոխություն: Այսպիսով ծնողների ներգրավվածությունը շատ կարևոր և դրական ազդեցություն ունի կրթական գործընթացում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը[2]: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»:«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանն ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն»նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսմանգործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

Ներկա ժամանակահատվածում հասարակությունը դպրոցի առջև նոր խնդիրներ է դնում ծնողների դաստիարակչական ներուժի ճիշտ ու նպատակահարմար օգտագործման և նրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների կառավարման մեջ ներգրավելու առումով: դա նշանակում է, որ դպրոցը և ընտանիքը պետք է դիտարկել որպես հավասար իրավունքներ ունեցող գործընկերներ, որոնց գործողությունների հիմքում ընկած է փոխադարձ հարգանքն ու վստահությունը: Ուստի երկու կողմերի սոցիալական գործընկերությունը պետք է դառնա դպրոցում երեխայի բարեհարմարության պայման: Իսկ փոփոխությունը դիրքորոշումներում կհանգեցնի դպրոցի և ընտանիքի փոխգործակցության նոր ձևերի որոնմանը:

Այս ամենից ակնհայտ է դառնում դպրոցի ու սովորողների ծնողների միջև համագործակցության կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունը, որը, ինչպես արդեն նշել ենք, կարևոր խթան կհանդիսանա սովորողների բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման համար: Դպրոցի և սովորողների ծնողների միջև

համագործակցության կազմակերպման համար կարևոր դերակատարություն ունի դասղեկը: Դպրոցի և սովորողի ընտանիքի համագործակցությունը երկարատև և նպատակաուղղված աշխատանք է, որը ենթադրում է, ընտանիքի, երեխայի ընտանեկան պայմանների և դաստիարակության առնաձնահատկությունների համակողմանի և հետևողական ուսումնասիրություն:

Ուսուցիչ ծնող համագործակցության հիմքում ոչ միայն պետք է ընկած լինի ֆասիլիստացիայի տեխնոլոգիան, այլև պետք է այն դառնա նշված համգործակցության հիմնական պայման[3]: Այստեղ անհրաժեշտ է ևս մեկ անգամ շեշտադրել, որ այդպիսի փոխգործակցությանը նպաստող ուսուցիչը պետք է անկեղծ լինի, կարողանա ինքնուրույն որոշումներ կայացնել, ստեղծագործական մտածողություն ունենա, և երբեք խնդիրներ չստեղծի սովորողի համար:

1.1. Ուսուցիչ – ծնող համագործակցության իրականացման եղանակները սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության գործում

Կրթական գործընթացին ծնողներին ներգրավվելու և նրանց հետ արդյունավետ համագործակցելու նպատակով իրականցվող աշխատանքները տարվում են 4 հիմնական ուղղություններով՝ ճանաչողական, տեղեկատվական- վերլուծական, ակնառու-տեղեկատվական և ժամանցային: Ճանաչողական ուղղության նպատակն է ծնողներին ծանոթացնել երեխաների տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին և նրանց մոտ ձևավորել երեխաների դաստիարակման գործնական հմտություններ: Ծնողների մասնակցությամբ հանգստի, ժամանցային միջոցառումների, համատեղ էքսկուրսիաների, զբոսանքների, արշավների

կազմակերպումը, ինչպես նաև բաց դասերը հնարավորություն են տալիս ծնողներին դիտարկել իրենց երեխաներին, այնպիսի իրավիճակներում, որոնք տարբերվում են ընտանեկան իրավիճակներից, համեմատել իրենց երեխաների վարքն ու հմտությունները մյուս երեխաների վարքի և հմտությունների հետ, ուսուցիչներից ընօրինակել, դաստիարակության և ուսուցման մեթոդներ և հնարներ, և ի վերջո ուսուոցչի հետ համատեղ ստեղծել զարգացնող միջավայր երեխաների համար:

Տեղեկատվական-վերլուծական ուղղության նպատակն է բացահայտել ծնողների հետաքրքրություններն ու պահանջմունքները, ինչպես նաև նպաստել, ուսուցիչների, ծնողների և աշակերտների միջև հուզական կոնտակտի հաստատմանը:

Ակնառու-տեղեկատվական ուղղության նպատակն է տեղեկատվություն հաղորդող նյութերը ձևակերպել և մատուցել այնպես, որ գրավի ծնողների ուշադրությունը, ներկայացնել գեղագիտական էսթետիկ ձևավորված, մշտապես թարմացնել դրանց պարունակությունը, որպեսզի չկորի դրանց հանդեպ ծնողների հետաքրքրությունը:

Ժամանցային ուղղությունը միտված է ստեղծել ջերմ, վստահելի, հուզական հարաբերություններ ծնողների և ուսուցիչների, ծնողների և երեխաների, սովորողների և ուսուցիչների միջև: Աշխատանքների այս ուղղությունն ամենապահանջվածը, ամենացանկալին, ամենաօգտակարն է: Ժամանցները, տոները պետք է կազմակերպել ոչ թե ծնողների այլ ծնողների անմիջական մասնակցությամբ, որպեսզի նրանք պատկերացնեն թե որքան ուժ, եռանդ պետք է ներդնել ցանկացած միջոցառում կազմակերպելու համար: Արդյունավետ է նաև այդ միջոցառումներին բոլոր ծնողների համագործակցությունը, շփումը միմյանց հետ:

Դպրոցի և ընտանիքի միջև երկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն: Մեծ մասամբ տեղեկության հաղորդման

համար արդյունավետ միջոցներ են մշակված, օր, տեղեկագրեր, կայք էջեր և դպրոցի տեղեկատվական վահանակներ, որտեղ համապատասխան նյութեր/ուղերձներ են տեղադրվում: հաճախ դպրոցներում մշակված են նմանատիպ մեխանիզմներ ծնողների ակտիվ հետադարձ կապի ապահովման նպատակով:

Երբ ուսուցիչ-ծնող հաղորդակցումը կանոնավոր և արդյունավետ է աճում է ծնողների ներգրավածությունը, նրանց կողմից դպրոցի գնահատումը բարձրանում է և ձևավորվում է դպրոցի նկատմամբ դրական կապվածություն:

Համագործակցությունը այն համատեղ գործունեությունն է որն ուղված է միասնական նպատակներին հասնելուն: Այն նախատեսում է՝

- Նպատակների միասնության հստակ գիտակցում
- Համագործակցող կողմերի գործառույթների հստակ սահմանագծում
- Նպատակներին հասնող խնդիրների իրագործման մեջ փոխադարձ օգնություն:

Կարելի է արդյոք այս դիրքերից դնել համագործակցության մասին հարցը, հաշվի առնելով տարբեր տարիքային խմբերի սովորողների ներուժը: Ակնհայտ է, որ պահանջվում է այս հասկացողության և այս սկզբունքի իրագործման ավելի խորը, տարբերակված բացատրություն: Այս դիրքերից մենք առանձնացնում ենք համատեղ գործունեության հետևյալ ձևերը:

Դիտարկենք Ուսուցիչ-ծնող, ուսուցիչ- աշակերտ համատեղ գործունեության ձևերը, որի նպատակն է հաջողության իրավիճակի ստեղծումը:

Խնամակալություն /կրտսեր դպրոցական շրջան/ մեծերի որոշիչ դերը երեխաների աճող դերի պարագայում, նրանց կողմից նպատակների միասնության հետզհետե գիատկցում:

Գործընկերություն /կրտսեր դպրոցական, կրտսեր դեռահասության շրջան/: Մեծերի դերը գերակշռող է: Նպատակների գիտակցման մեջ անբավարար հավասարության : Գործունեության հաջողությունը ապահովվում է համատեղ ջանքերի հարաբերական հավասարության դեպքում:

Համագործակցություն /կրտսեր և աբագ դեռահասության տարիք/: Մեծերի ղեկավարող դերը: Նպատակների միասնության բավականաչափ գիտակցում: Հաջողությունն ապահովվում է համատեղ ջանքերի հավասարությամբ, միմյանց օգնություն ցուցաբերոլու պատրաստակամությամբ:

Իրավիճակ <<Ընտանեկան ուրախության>>

Երեխան ուրախություն է ապրում նրանից, որ նրա հաջողություններն ուրախություն են առաջացրել ընտանիքում, բարձրացրել են նրա հեղինակությունը, հուզական բարեկեցությունեն առաջացրել ամենաթանկ և մտերիմ մարդկանց շրջանակում:

Դպրոցում ուրախության ցանկացած իրավիճակ կապված է <<ուսուցիչ-աշակերտ>>, <<ուսուցիչ- ծնող>>, <<ուսուցչական կոլեկտիվ – աշակերտական կոլեկտիվ>> տարրական երկու համակարգերի ազդեցության հետ: Այս երկօղակ օրգանիզմում գրեթե ամեն ինչ ենթարկվում է վերահսկողության և ղեկավարման:

Եթե ընտանիքը դաշնակից է, դպրոցի ուժերը եռապատկվում են / դպրոց-աշակերտ-ուսուցիչ-ծնող/, իսկ եթե դաշնակցություն չկա, ապա դպրոցի ուժերը նվազում են:

Ծնողների դերը <<ընտանեկան ուրախություն>> իրավիճակի ստեղծման գործում: ընտանիքի օգնությունը ենթարկվում է որոշակի կանոնների, պետք իրագործվի հաջորդաբար, մտածված:

Առաջին դասարանցին կարիք ունի մեծերի կողմից մշտական օգնության վերահսկողության: Հոգատար ծնողները, ընտանիքի մյուս անդամները սովորոբար վերահսկում են ամեն քայլ, ոչ միայն օգնում են, այլ ակտիվորեն իրենք են ընդգրկվում երեխայի աշխատանքի մեջ:

Երկրորդ դասարանցիներին ավելի շատ հարկավոր է ոչ թե մասնակցություն, այլ համագործակցություն:

Երրորդ դասարանում ընտանիքի անդամների օգնությունը պետք է սահմանափակվի միայն դիտումներով և վերահսկողությամբ:

Ծնողական վերահսկողությունը միայն պարզ դիտում չէ: Այն իր էությամբ բովանդակային է: Այս վերահսկողության մեջ առկա է ինքնատիպ <<աշխատանքի

բաժանում>>: Ուսուցիչը պատասխանատու է արտադրանքի վերահսկողության, վերջնական արդյունքի համար, իսկ բուն գործընթացի համար:

<<Կոմպենսացում>>

Յուրաքանչյուր ընտանիք օժտված է որոշակի նյութական, ինտելեկտուալ և հոգևոր ներուժով: Այդ ներուժները տարբեր են: Բնականաբար, ոչ բոլոր ընտանիքներն են ի վիճակի երեխային տալ այն, ինչ նրա համար կապահովի հաջողություն դպրոցական գործերում: Սակայն անհրաժեշտ է նաև նշել այն, որ դպրոցը ոչ միշտ է պատրաստ լրացնել այն, ինչը կազմում է ընտանիքի մանկավարժական ազդեցության պակասը:

Չի կարելի արդյոք միավորել տարբեր ընտանիքների ներուժը, ապահովելու համար այս ներուժների տարբերությունների կոմպենսացումը: վերջին տարիներին այս խնդիրը տարբեր դպրոցներում լուծվում է << ընտանեկան խմբակների>> ստեղծման ճանապարհով: Որոշ ծնողներ իրենց տուն են հրավիրում իրենց երեխայի համադասարանցիներին, որոնց հետ կազմակերպում են համատեղ պարապմունքներ, հանգիստ, զարգացնում են երեխաների հետաքրքրություններն ու ունակությունները: Ընտանեկան ջերմության հարմարավետության, ստեղծագործելու, համագործակցելու մթնոլորտում երեխայի գտնվելը բարենպաստ կերպով է ազդում ոչ միայն օտար, այլ նաև սեփական երեխաների վրա:

Այն դպրոցներում, որտեղ ընտանեկան խմբակները ստանում են զանգվածային բնույթ, կարելի է խոսել ինքնուրույն, ընտանեկան, ուսումնա-դաստիարակչական ներուժի ձևավորման մասին, որը լրացնում և կոմպենսացնում է առանձին ուսուցչի ընդհանուր առմամբ դպրոցի մանկավարժական ներուժը:

Ծնողը պետք է ունենա մեծ ցանկություն ու կամք, իսկ ուսուցիչը պետք է աջակցի նրանց, որպեսզի ուսուցիչն ու ծնողը ունենան միանման սպասումներ ու օժանդակեն ուսման գործընթացին:

Ուսուցիչ-ծնող արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացված սկզբունքներին/

1. Վստահել: Ծնողների հետ արդյունավետ շփումը և հաղորդակցումը սկսվում է վստահությունից: Վստահության կարևոր պայման է ստացած ինֆորմացիայի գաղտնի պահելը:
2. Պահպանել երկողմանի կապ: արդյունավետ հաղորդակցում հաստատելը թույլ է տալիս երկու կողմերին էլ հասկանալ միմյանց պահանջները և նպատակները: Երբ ուսուցիչը խոսում է ծնողների հետ պետք է զարցեր տա ոչ միայն ուսումնական բնագավառներից այլև աշակերտների հետաքրքրություններից:
3. Համագործակցել: Համագործակցող կողմերը ընդհանուր եզրեր պետք է գտնեն հաջողության հասնելու համար ընդհանուր նպատակներ սահմանելիս: Երբ առաջանում է որևէ խնդիր, դժվարություն, պետք է այն քննարկել ծնողների հետ: Ուսուցիչը պետք է միշտ հիշի, որ ընտանքիները տարբեր են, և բոլորի հետ գործընկերային հարաբերություններ հաստատելիս պետք է ցուցաբերոլ անհատական մոտեցում:
4. Կրել ընդհանուր պատասխանատվություն: Ծնողները և ուսուցիչները պետք է կիսեն պատասխանատվությունը:
5. Լավատես լինել: Ծնողների և ուսուցիչների փոխհարաբերությունները կառուցվում են լավատեսության հիմքի վրա: Ծնողների հետ հաղորդակցությունը սկսելիս անհրաժեշտ է խոսակցությունը սկսել դրական, լավատեսական նոտայով:
6. Պահպանել ջերմ հարաբերություններ: պիտի լինել ընդունող և աջակցող:
7. Խթանել և քաջալերել: Որպեսզի ծնողը իրեն զգա արժեքավոր, պետք է լսել ծնողի առաջարկները, ուսուցումն արդյունավետ կազմակերպելու իր մոտեցումները:

Գլուխ 2: *Հետազոտական մաս*

Ուսումնասիրելով տարբեր հեղինակների աշխատություններ ուղղված ուսուցիչների համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցում թեմայի շրջանակներում կարելի է առաջադրել դաստիարակության գործընթացի բարելավման, ընտանիքի և դպրոցի համագործակցության արդյունավետ ուղիներ:

Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում, բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում ներառել այնպիսի դասընթացներ, որոնք կօգնեն ուսուցչին առավել լավ ճանաչելու երեխային, նրա ներաշխարհը, բացահայտելու նրա հետաքրքրությունների շրջանակը, նաև ընտանիքի հետ համագործակցության եզրեր գտնել:

Ծնողներին, ընտանիքի մյուս անդամներին, նաև հասարակության ներկայացուցիչներին ընդգրկել դպրոցում կազմակերպվող դաստիարակչական աշխատանքներում ՝ նկատի ունենալով, որ ծնողներն իրենց երեխաների առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են բարոյական դաստիարակության հարցում: Ցանկալի է նաև մշակույթին օջախներ այցելությունները ավելի հաճախակի դարձնել:

Եզրակացություն

Ինչպես ցանկացած ոլորտում, որտեղ առկա է մարդկային գործոնը այնպես էլ դպրոցում կարևոր է մարդկային փոխհարաբերությունների ուսումնասիրությունը, հատկապես ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցում:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ դպրոցի և ընտանքի համագործակցությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ գործընթացում ծնողներին հանդիպող դժվարությունները, նրանց կողմից ներկայացվող առաջարկությունները, աշակերտների կրթական պահանջմունքները, որոնք կնպաստեն դաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացմանը:

Անհրաժեշտ է ծնող – ուսուցիչ փոխհարաբերությունները կառուցել այնպես, որ կարևորված լինեն երեխայի կարողությունները, հարկ է նաև կրթել ու զարգացնել ծնողներին, օգնել ծնողին, որ նա կարողնա ճանաչել երեխային, բացահայտի նրա կարիքները, անհանգստությունները, լսել նրա ցանկացած մտահոգություն, ձևավորել մանկավարժական մշակույթ:

Երեխայի ծնողը պետքէ ներգրավված լինի երեխայի կրթության կազմակերպման գործընթացում: Ծնողի ներգրավվածությունը ենթադրում է ՝ ապահովել ծնողի և դպրոցի թիմի բոլոր անդամների միջև փոխադարձ կապը և նրանց ներգրավվումը ուսուցման գործընթացում և դպրոցական առօրյայում: Ծնողներին պարբերաբար տեղեկացնել առաջ եկած դժվարությունների և ձեռքբերումների մասին:

Ուսուցիչը կապեր հաստատելով աշակերտի ծնողի հետ լուծում է հետևյալ խնդիրները՝ ճանաչել երեխայի ընտանիքը, ուսումնասիրել սոցիալական միջավայրի ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա, օգնել ծնողին՝ ընտանեկան

պայմաններում երեխային դաստիարակելու, կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը:

Մանկավարժական աջակցություն, անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր ընտանիքի, այդ թվում նաև անբարենպաստ ընտանիքներին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, մանկավարժական հսկողությունից դուրս մնացած երեխաներին: Երեխայի համար ապահով դաստիրարակչական միջավայրի ստեղծման գործում ընտանիքն ու դպրոցը հավասարազոր սուբյեկտներ են:

Գրականության ցանկ

1. Կիրառական մանկավարժություն: Գյումրի 2018
2. Կարապետյան Ի. Կ, Ընտանիք- դպրոց համագործակցության ֆասիլիստացիոն մոդել, <<Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանքիում, 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները>>, գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, <<Մանկավարժ>>, հրատ., 2016թ.,
3. Й. Зимпояя Педагогичейкая псехологи, Растов-на-Дону: Фении 1997
4. Н. Гайворонская Взаимодействие школи и семьи в воспитании букибди. 2012
5. Педагогика: Педагогические теории, системы, технологии/ Под пед. С. А. Смирнова. М, 2000г.: